ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 162

08 նոյեմբերի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Մ-1 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԻՋԵՎ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2425 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ (ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0020) ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ և ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32 հոդվածի 17 կետի և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 08 հոկտեմբերի 2012 թվականի N 55-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 08 նոյեմբերի 2012 թվականի թիվ 7ա որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի Մ-1 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի միջև գտնվող տարածքում հասարակական սպասարկման օբյեկտներ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0020) 2425 քառակուսի մետր մակերեսով հողատարածքի աճուրդային եղանակով 692200 (վեց հարյուր իննսուներկու հազար երկու հարյուր) դրամ առավելագույն արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Հայկ Ավագյանին և այդ հողամասի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Հայկ Ավագյանի հետ օրենքով նախատեսված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ